ԳՆԻՇԻԿ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արա Լևոնյան

Հեռախոս՝ +37494441655

Բնակչություն՝ **77**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գնիշիկի համայնքն իր մեջ ընդգրկում է Գնիշիկ և Մոզրով գյուղերը: Գնիշիկ գյուղը գտնվում է մարզկենկտոնից 24կմ հեռավորության վրա, հարավ արևմտյան մասում, սահմանակից է մարզի Արփի, Եղեգնաձոր, Ագարագաձոր, Խնձորուտ , Խաչիկ, Արենի, Աղավնաձոր համայնքներին, ինչպես նաև Վայոց ձորի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքի՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը: Ծովի մակարդակից գտնվում է 2060մ բարձրության վրա: Կլիման բարեխառն է, ձմռանը մեղմ է, բայց ձյունառատ, ամռանը զով է: Գնիշիկ գյուղում բնակվում են 71անձ, որոնց մի մաս ձմռանը տեղափոխվում են այլ բնակավայրեր: Զբաղվածության ոլորտներն են՝ գյուղատնտեսությունը, անասնապահությունը և մեղվաբուծությունը: Վարչական տարածքը կազմում է 6417հա : Գնիշիկ գյուղն իր պատմության ընթացքում մի քանի անգամ կառուցվել և քանդվել է, այդ են վկայում տարբեր գրականություններից մեզ հասած տվյալները, ներկայումս գոյություն ունեցող տարբեր ժամանակի դամբարանադաշտերը, գերեզմանոցները, խաչքարերը, 9-13րդ դարերի եկեղեցին, մատուռները, ջրաղացները: Չնայած այն բանին, որ գյուղի տարածքում ներկայումս էլ կա 4րդ, 5րդ դարերի խաչքարեր, սակայն ըստ պատմածի նախավերջին անգամ գյուղը վերակառուցվել է 1770- ական թվականներին, բնակիչները եկել են Նախիջևանից, Ղարաբաղից Ալաշկերտից և այլ տեղերից: 1950 ական թվականներին գյուղում 150 ծուխ կար: Նախկին Եղեգնաձորի շրջանի հացահատիկի զգալի մասը մթերվում էր հենց Գհիշիկ գյուղից, որի համար էլ գյուղը համարվել է մեր տարածաշրջանի հացի շտեմարանը: 1960 ական թվականներից սկսած տարածքի սողանքի պատճառով գյուղի բնակչությունը տարիների ընթացքում տեղափոխվել Արփա գետի հովտում նոր կառուցվող Արփի գյուղը: 1975 թվականին Գնիշիկ և Արփի գյուղերի մեջտեղում կառուցվել է ևս մեկ գյուղ՝ Մազրովը: Գնիշիկցիների մեծ մասը տեղափոխվել են Արփի, իսկ մնացած մասը՝ Մոզրով: 13-րդ դարում Գնիշիկը եղել է Օրբելյան Իշխանների ամառանոցը: Ինչպես նշվեց վերևում՝ Մազրով գյուղը հիմնվել է 1975 թվականին, 1988-90 ականներին ունեցել է մոտ 35 տնտեսություն, ժողովրդի զբաղվածությունը հիմնականում եղել է անասնապահությունը: 1991 թվականին կազմավորվել է Գնիշիկի համայնքը, Գնիշիկ և Մոզրով գյուղերի ընդգրկումով: Գյուղն ունի հիմնական դպրոց: